բանէ հայրախնամէ 'ի վեր, ձեռնադրեալ 'ի հայրախնամէն պահեցեն տանն Հայոց։

Օրինակ նամակի պաշտօնի հինգ երորդ տանուտերութեան մինչ որ քայն երորդ որ լինիցի։

ԳԼՈՒԽ ԽԵ.

Տեսանելով մեր ընդունելութիւն ժողովրդեանն յաշխարհին պարսկայ հայքոյ և թուղթ փոխանորդութեան նոցայ ընդ ձեզ ստեփաննոսիդ դաւրէժու, պօղոսիդ մարաղու, ըստ Օրինացն կարգադրութեան հայոց 'ի միջոցէ ձերմէ մեք ընկալաք ստեփաննոսդ դաւրէժու եղբայրակից մեր և հաւատարիմ տանն հայոց, և 'ի վերայ երդման և արժանաւորութեան քոյ տուաք քեզ նամակ Շնորհաց և պաշտօնի տանուտէրութեան ժամանակաւ երիս ամաւ մէնջ տանն հայոց, զի դու Տեառն Ստեփաննոսդ դավրէժու նստցիս 'ի հինգ երորդ աթոռ տանուտէրութեան 'ի բարձրագահ և 'ի բարեվարք տանն հայոց, և ունիս իշխանութիւն տանուտէրամբ հանդերձ տացես իշխանութիւն ամենայն պաշտօնի նամակօք ամենայն պաշտօնատարաց, զի ելանեն իւրաքանչիւր գործ, և ունիս իշխանութիւն տանուտէրօք հանդերձ ըստ Օրինօքն հայաստանեաց հրամայել 'ի վերայ ամենայն բնութեան մարդոյ 'ի յերեսս երկրին հայաստանեաց. գրուեցաւ 'ի դրունս բար-